

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 59/3

16 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց «Կարասամ» ՍՊԸ 22.11.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 11.11.2013 թ-ի թիվ 2122781 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 11.09.2013թ. թիվ 212278 հանձնարարագրի համաձայն «Կարասամ» ՍՊԸ-ում (այսուհետ՝ ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 24.12.2010 թ-ից մինչև 02.10.2013 թ. ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 11.11.2013 թ-ի թիվ 2122781 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով կիրառվել է «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ 150000 դրամի չափով:

«Կարասամ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի հարկային տեսչության պետի 11.09.2013թ. թիվ 2122781 հանձնարարագրով «Կարասամ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Հրազդանի ՏՀՏ կողմից ընկերության տնօրենի հասցեով ուղարկվել է 02.10.2013 թ-ին կազմված թիվ 2122781 ակտի նախագիծը, որի կապակցությամբ ներկայացվել են համապատասխան առարկություններ:

15.11.2013 թ-ին ընկերության տնօրենին է ուղարկվել թիվ 2122781 ակտը, որով ընկերույանը տուգանք է առաջադրվել 150.000 դրամի չափով, որտեղ նշվել է, թե իբր Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 21 փողոց, 15 հողամաս հասցեում գտնվող հյուրանոցից կատարվել է գնում՝ 7300 դրամ ընդհանուր արժողությամբ՝ հյուրանոցային ծառայության սպասարկում, որի դիմաց կատարվել է կանխիկ վճարում:

Ստուգման ակտում ՏՀՏ-ի տեսուչների կողմից նշվել է նաև, որ վաճառող-գանձապահը վճարված գումարի ընդհանուր արժեքը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել:

Նախ նշենք, որ հարկային տեսուչի կողմից կատարվել է հյուրանոցային ծառայության սպասարկում, որի դիմաց հաշվի հետ նրան տրամադրվել է ՀԴՄ կտրոնը:

Ընկերության ՀԴՄ գումար մուտքագրված լինելու և ՀԴՄ կտրոն տրամադրված լինելու անհերքելի փաստն ըստ էության արձանագրվել է հենց Z հաշվետվությամբ, թեկուզև այն այդ ժամերին ընկերության ՀԴՄ մուտքագրված ամբողջ գումարին է վերաբերվում ընդհանուր առմամբ՝ 14400 դրամի չափով, որը կազմված է եղել երկու վճարումից, որոնցից մեկն էլ հենց տեսուչի վճարած գումարն է:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Ստուգման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվել է ոչ թե տեղում, այլ մեկ այլ վայրում, որը ընկերության կողմից ստացվել է փոստային առաքմամբ:

Սույն փաստի հիմնավորումն այն է, որ եթե արձանագրությունը կազմվեր խախտումը ֆիքսելուն պես, արձանագրության վերաբերյալ ընկերության առարկությունները կներկայացվեին անմիջապես:

ՀՀ Կառավարության 26.08.2004 թ-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» որոշման 19-րդ կետի ա) ենթակետի համաձայն.

«Պատասխանատու անձը պարտավոր է՝

ա. հաշվիչ սարքի միջոցով մուտքագրել դրամական գումարը, որոշել ընդհանուր գումարը և տեղեկացնել գնորդին, պատվիրատուին և այլն»:

Նույն որոշման 19-րդ կետի բ) ենթակետի համաձայն. «ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին, պատվիրատուին տրամադրել դրամարկղային չեկ (կտրոն)»:

Եթե հաշվի հետ արդեն իսկ ներկայացվել է ՀԴՄ կտրոնը, ապա էլ որտեղից պետք է ստուգող տեսուչներին այն կրկին ներկայացվեր:

Վերգրյալի հիման վրա ընկերությունը խնդրում է 11.11.2013 թ-ին կազմված թիվ 2122781 ակտը վերացնել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձ՝ հարկային տեսուչ Հայկ Ղազարյանը պնդեց, որ 26.09.2013 թ-ին, ժամը 16:40-ին Կոտայքի մարզ գ.Ջրվեժ 2 փող., 15 հողամասն հասցեում գտնվող հյուրանոցում իրեն մատուցված հյուրանոցային ծառայության դիմաց կատարել է 7300 դրամի վճարում: Սակայն, գանձապահը վճարված գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգող անձինք ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը և պահանջել են, որպեսզի ներկայանա ընկերության տնօրենը: Ընկերության աշխատակիցը հայտնել է, որ տնօրենը տեղում չէ և մինչև վերջինս չներկայանա չի կարող կատարել որևէ պահանջ: Տնօրենը ներկայացել է միայն ժամը 17:40-ին: Ստուգող անձինք ընկերության տնօրենին են ներկայացրել ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը, սակայն վերջինս հրաժարվել է ստորագրել և ստանալ հանձնարարագրի մեկ օրինակը, ինչի վերաբերյալ կազմվել է արձանագրություն: Այնուհետև ՀԴՄ-ից դուրս են բերել Z հաշվետվությունը 14400 դրամ ընդհանուր գումարով, որում հարկային տեսուչ Հայկ Ղազարյանի կողմից վճարված 7300 դրամը ներառված չի եղել:

Ընկերության ներկայացուցիչների այն պնդումներին, որ հարկային տեսուչի կողմից վճարված 7300 դրամը ներառվել է ՀԴՄ, ստուգող անձինք պահանջել են ներկայացնել ժամը 16:40-ի դրությամբ ՀԴՄ-ից դուրս բերված 7300 դրամի կտրոնը:

Սակայն, ընկերության ներկայացուցիչները հայտարարել են, որ իրենք նման կտրոն չունեն:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ակնհայտ է հարկային տեսուչ Հայկ Ղազարյանին մատուցված ծառայության դիմաց վերջինիս կողմից վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը, քանի որ նման կտրոնի առկայության պայմաններում այն պարզապես կներկայացվեր ստուգողներին:

Քննարկվող դեպքում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի գ) ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը՝ գումարով 150000 դրամ:

Հանձնաժողովի 29.11.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ ՈՒ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ